ԲՈՒՀ-ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՄՈՒՐ ՀԻՄՔԵՐԻ ՎՐԱ

Գիտակցելով, որ մանկավարժական կրթության համակարգում բուհ-դպրոց կապը ապագա ուսուցիչների նախապատրաստման կարևոր պայմանն է, ԱրՊՀ հայոց լեզվի ամբիոնը շարունակում է իր համագործակցությունը Ստեփանակերտի դպրոցների հայոց լեզվի և գրականության մեթոդ-միավորումների հետ:

Այս կապակցությամբ օրերս ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Նունե Խաչատրյանը նախաձեռնել էր սեմինար-քննարկում, որին հրավիրված էին մայրաքաղաքի հանրակրթական դպրոցների հայոց լեզվի և գրականության մասնագետները:

«Բազմագործառութային շաղկապները ժամանակակից հայերենում» թեմայով սեմինարի ընթացքում բանախոսը ներկայացրել է թեմային առնչվող արդիական հիմնախնդիրները, տվել գիտա-մեթոդական ցուցումներ:

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՏԵՓԱՆ ՄԱԼԽԱՍՅԱՆՑԻ ԾՆՆԴՅԱՆ 160-ԱՄՅԱԿԻՆ

Դեկտեմբերի 6-ին ԱրՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Հասմիկ Ղազարյանի ղեկավարությամբ հայոց լեզու մասնագիտության երկրորդ կուրսի մագիստրանտները կազմակերպել էին գիտական սեմինար՝ նվիրված բանասեր ու բառարանագիր, ակադեմիկոս Ստեփան Մալխասյանցի ծննդյան 160-ամյակին:

Մագիստրանտները ներկայացրել են Ստեփան Մալխասյանցի գրական-գիտական, լրագրողական գործունեությունը, ներդրումը բանասիրության, թարգմանության և լեզվաբանության ոլորտներում, թողած ժառանգությունը, որոնց ուղերձը մեկն էր՝ «Հայ բանասիրության և բառարանագրության պատմության մեջ իր գիտական բեղմնավոր գործունեությամբ Ստ. Մալխասյանցը կա իբրև հայագիտության անխոնջ մշակ ու հայ ժողովրդի հոգևոր մշակույթի մեծ երախտավոր»:

«Չնայած հայ հին մատենագրության ու բանասիրական ուսումնասիրությունների բնագավառում ունեցած մեծ վաստակին՝ Մալխասյանցն ավելի շատ ճանաչված է որպես հմուտ լեզվաբան: Նա անդրադարձել է հին հայերենի, հայոց լեզվի պատմության, համեմատական քերականության, ինչպես նաեւ ժամանակակից հայերենի մի քանի կնճռոտ ու բանավիճային հարցերի՝ ծանրակշիռ խոսքն ասել հայոց լեզվի ցեղակցության, հայերենի տաղաչափության եւ բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ», -նշել է ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Հասմիկ Ղազարյան:

ԴԱՍ-ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԲԱՆԱՀԱՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԻՑ

Դեկտեմբերի 14-ին բանասիրական ֆակուլտետում հայոց լեզու և գրականություն մասնագիտության առաջին կուրսի ուսանողները բաց դաս-սեմինարի ձևաչափով ամփոփեցին «Հայ ժողովրդական բանահյուսություն» դասընթացը:

Ուսանողներն իրենց ելույթներում ընդհանրացրեցին բանահյուսությունից ստացած գիտելիքները՝ գրական հայերենով և արցախյան բարբառով ներկայացնելով պատառիկներ հայ ժողովրդական բանահյուսությունից:

«Ժողովրդական բանահյուսությունը ազգային հոգևոր արժեքի մի մասն է, որը հասել է մինչև մեր օրերը՝ ձևավորելով ու ամբողջացնելով այն կրողների ազգային դիմագիծը և հարուստ նյութ հանդիսանալով ինչպես ժամանակակից գեղարվեստական գրականության, այնպես էլ պատմագրության և արվեստի մյուս ճյուղերի զարգացման համար»,- նշել է միջոցառման կազմակերպիչ, բ.գ.թ., դոցենտ Ջ. Բալայանը:

ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Դեկտեմբերի 7-ին ԱրՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի դասախոս Գոհար Սարգսյանի նախաձեռնությամբ կազմակերպվել էին ճանաչողական ընթերցումներ՝ նվիրված վերլուծության էվրիստիկ մեթոդներին:

Ներկայացնելով վերլուծության էվրիստիկ կամ կրեատիվ մեթոդների տեսությունը, դրանց թույլ և ուժեղ կողմերը, առավելություններն ու թերությունները՝ ուսանողները լսարանի միջոցով գործնականում կիրառել են վերջիններս, կազմակերպել հարցազրույցներ և ինտերակտիվ բիզնես-խաղեր:

«Նման միջոցառումները հնարավորություն են տալիս ուսանողներին ձեռք բերված տեսական գիտելիքները կիրառել գործնականում, տեսակետներ հայտնել, բանավիճել, հանդես գալ առաջարկություններով: Սա ժամանակակից դասի օրինակ է»,- ասել է Գ. Սարգսյանը:

Հաջողված ընթերցումների կապակցությամբ ուսանողներին խրախուսեցին նաև ֆակուլտետի դեկանն ու ամբիոնի վարիչը:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հրատարակվում է 1994 թվականից

Խմբագիր՝ Զարիհե Սառաջյան
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Իմացի՛ր քո համալսարանի մասին:
Այցելի՛ր asu.am կայք:
www.asu.am

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 09 (205)
ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2017

ԱՄՓՈՓՎԵՑ «ՈՒՍԱՆՈՂ-ԱՇԱԿԵՐՏ-ԶԻՆՎՈՐ. ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ» ԾՐԱԳԻՐԸ

Դեկտեմբերի 15-ին ԱրՊՀ-ում հանդիսավոր պայմաններում ամփոփվել է հոկտեմբերին մեկնարկած «Ուսանող-աշակերտ-զինվոր. միասնության ուժը» ծրագիրը: Հանրապետության բոլոր շրջանները, մայրաքաղաք Ստեփանակերտը և պաշտպանության բանակը ներկայացնող թիմերը հանդիպել են մայր բուհում. առիթը՝ ինտելեկտուալ խաղի եզրափակիչ փուլն էր, որը նվիրված էր Արցախյան շարժման 30-ամյակին:

Միջոցառմանը մասնակցում էին ԱՀ Ազգային ժողովի խոսնակ, ԱրՊՀ խորհրդի նախագահ Աշոտ Ղուլյանը, ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը, Արցախյան շարժման ակտիվիստներ, զինվորականներ, մանկավարժներ, աշակերտներ, համալսարանականներ:

Նախքան միջոցառման մեկնարկը՝ ուսանողական մարմինների ուղեկցությամբ հյուրերը շրջայց կատարեցին համալսարանում, ծանոթացան ուսումնական գործընթացին և ուսանողական առօրյային, ապա հարգանքի տուրք մատուցեցին ԱրՊՀ զոհված ուսանող - ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողին:

ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանն իր ելույթում ներկայացրեց ծրագրի նպատակն ու խնդիրները՝ հավաստիացնելով, որ համալսարանականներին հաջողվել է հասնել նախանշած նպատակին՝ միավորել ուսանողին, աշակերտին և զինվորին՝ հանուն մեկ գաղափարի: Իր խոսքում պրոռեկտորն ընդգծել է հատկապես ծրագրի մասսայականության հանգամանքը՝ նկատելով, որ ծրագրին մասնակցել են շրջանների ավելի քան 400 աշակերտ և 250 ուսանող, ինչը խոսում է նաև ծրագրի աննախադեպ լինելու մասին. «Ծրագրի մասնակիցները եղել են ոչ միայն դպրոցներում, կազմակերպել ինտելեկտուալ խաղեր, այլև՝ շրջանների զորամասերում, գիշերօթիկ հաստատություններում, պատմամշակութային նշանակության վայրերում, հանդես եկել մշակութաժամանցային ծրագրերով, վարպետության դասերով, իրականացրել հասարակական աշխատանքներ»,- ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները թվարկել է Վ. Յարամիշյանը: Ընդգծելով մայր բուհի նախաձեռնողականությունը՝ Աժ նախագահ Ա. Ղուլյանը պատահական չի համարում այն, որ Արցախյան շարժման 30-ամյակի միջոցառումների մեկնարկը տրվում է հենց այնտեղ, որտեղից սկիզբ է առել համազգային շարժումը:

«30 տարի առաջ այն ժամանակ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտն ալիքվեց ու դուրս եկավ հրապարակ՝ շարժումը դարձնելով համաժողովրդական: Այնպես, ինչպես 30 տարի առաջ էր, այսօր էլ ԱրՊՀ-ն ցույց է տալիս, որ ամենաառաջին արծագանքողն է մեր երկրում կատարվող և կատարվելիք իրադարձությունների: Ծրագիրը՝ ասվածի առհավատչյան»,- նկատում է Աժ խոսնակը:

Ելույթով հանդես եկավ նաև Արցախյան շարժման առաջամարտիկ, ԱրՊՀ նախկին ռեկտոր Համլետ Գրիգորյանը՝ պատմելով շարժման օրերին համալսարանականների նստացույցերի ու հացադուլների, նրանց համարձակ ու անձնազոհ քայլերի մասին, որոնցից սկիզբ էր առել շարժումը:

Ելույթներից հետո թիմերը մասնակցեցին երեք փուլով ընթացած ինտելեկտուալ խաղին: Յուրաքանչյուր փուլի ընթացքում հնչեցին թեմատիկ հարցեր Արցախյան շարժման պատմություն, հայագիտություն և արցախագիտություն, ընդհանուր զարգացողական հարցեր: Արդյունքում մրցանակային առաջին տեղում էր Ասկերանի շրջանը ներկայացնող «Ռեստարտ» թիմը, երկրորդ տեղում՝ Ստեփանակերտը ներկայացնող «Բրեյն սթորմ» թիմը, երրորդ տեղում՝ Շուշիի շրջանը ներկայացնող «Ակորդ» թիմը: Մրցանակային տեղեր զբաղեցրած թիմերը ԱրՊՀ ռեկտոր Մ. Մինասյանի կողմից պարգևատրվեցին պատվոգրերով, հուշանվերներով և գրքերով, առաջին տեղ զբաղեցրած թիմը՝ նաև գավաթով: Մյուս թիմերը պարգևատրվեցին հավաստագրերով, ծրագրին աջակցություն ցուցաբերած մի շարք ուսանողներ և աշակերտներ՝ շնորհակալագրերով:

«Շնորհավորում եմ բոլորիս հետաքրքիր և բազմաբովանդակ միջոցառման համար: Իսկապես անհրաժեշտ և նպատակային միջոցառում էր ոչ միայն բովանդակությամբ, այլև ընդգրկունությամբ»,- ասել է ռեկտորը և հույս հայտնել, որ ուսանող-աշակերտ - զինվոր եռամիասնությունը չի խաթարվելու երբեք՝ միավորելով նաև հասարակության մյուս շերտերին:

Խաղից հետո համալսարանականները, դպրոցականներն ու զինվորականները եռագույնով շարժվել են դեպի Վերածննդի հրապարակ, աղավնիներ բաց թողել՝ ի նշան հարատև խաղաղության:

ԱրՊՀ-ՈՒՄ ԷՐ ՏՆՏԵՍԱԳԵՏ ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆԸ

Ոչ ֆորմալ կրթության ծրագրի շրջանակում դեկտեմբերի 8-ին ԱրՊՀ-ում «ՀՀ և ԱՀ տնտեսությունը գլոբալ և տարածաշրջանային համատեքստում» թեմայով դասախոսությամբ հանդես է եկել տ.գ.դ., պրոֆեսոր, «Այլընտրանք» հետազոտական կենտրոնի ղեկավար Թաթուլ Մանասերյանը:

Ռեկտոր Մանուշ Մինասյանը ողջունել է Թ. Մանասերյանի այցը Արցախի Հանրապետություն և Արցախի մայր բուհ, կարևորել ոչ ֆորմալ կրթության նշանակությունը, որի գործունեության երկամյակը լրացել է արդեն:

«Բոլոր մասնակիցների կողմից իմ երախտագիտությունն եմ հայտնում ծրագրի կազմակերպիչներին և ծրագրի շրջանակներում հանդես եկած մասնագետներին՝ կրթության ոչ ֆորմալ մեթոդներով ուսանողների մտահորիզոնն ընդլայնելու, նոր գիտելիքներ հաղորդելու համար», - ասել է Մ. Մինասյանը:

«Չնայած աշխարհի տարբեր երկրների համալսարաններում դասախոսելու առիթներ եմ ունեցել, բայց Արցախի պետական համալսարանում դասախոսելը պատիվ և պատասխանատվություն է ինձ համար»,- ասել է Թ. Մանասերյանը և նշել, որ պատրաստակամ է իր նպաստը բերելու Արցախի տնտեսության զարգացմանը:

Սկսելով ՀՀ և ԱՀ ազգային անվտանգության հիմնախնդիրներից, որի բաղկացուցիչն է տնտեսական անվտանգությունը, բանախոսը նշել է, որ ներկայիս տնտեսությունն ապրում է ավելի շատ մարդկային, քան ֆինանսական ռեսուրսների ծգնաժամ:

«Եթե վիճակագրական տվյալներ բերելու լինենք, ապա պիտի փաստել, որ հանրապետությունում առկա է ոչ միայն բարձրագույն, այլև միջին մասնագիտական կրթություն ունեցող մասնագետների դեֆիցիտ»,- ասել է տնտեսագետն ու շեշտել գիտելիք տվողի դերը ճիշտ այնպես, ինչպես հաց արարողի:

Ինչ վերաբերում է Արցախ կատարած այցին, Թ. Մանասերյանը խոստովանել է, որ եկել է ոչ թե սովորեցնելու, այլ սովորելու. «Եթե կա մի բան, որ պիտի տանեմ Արցախից, ապա այս ժողովրդի և այս երկրի ղեկավարության հավատն է»: Նույնը վերաբերում է նաև գիտելիքին. «Գիտելիքը ոչ ոքի պետք չէ, եթե չհավատաս, որ այն զենք է: 35 տարվա մանկավարժական իմ գործունեության ամենածանր շրջանը կարող եմ համարել վերջին մի քանի տարիները, քանի որ առաջին անգամ ես հավատացնելու խնդրի եմ բախվել»:

ԱՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՈՒՆԵՑԵԼ ԱՊԱԳԱ ԻՐԱՎԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ

Դեկտեմբերի 8-ին կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ ԱրՊՀ իրավագիտության բաժնի ուսանողների հետ հանդիպում է ունեցել ԱՀ գլխավոր դատախազ Արթուր Մոսիյանը:

Բացելով հանդիպումը՝ ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը կարևորել է հանդիպումները պետական մարմինների ղեկավարների հետ՝ ընդգծելով դրանց նշանակությունը հատկապես ապագա իրավաբանների համար:

«Հաշվի առնելով նախորդ տարվա հանդիպման արձագանքները՝ հանդիպումը պահանջված կարելի է համարել, իսկ եթե նաև պատճառն ու նպատակը, ապա՝ խիստ անհրաժեշտ»,- նշել է ռեկտորը:

Ա. Մոսիյանը դասախոսությունքննարկումը բացեց կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվա նախապատմությամբ, ապա անդրադարձավ հանրապետության կոռուպցիոն երևույթների և ռիսկերի մակարդակին, դրանց վերահսկման մեխանիզմներին: Նրա խոսքով, կախված այն բանից, թե որքան հետևողական է պայքարը կոռուպցիոն երևույթների դեմ, այնքան մեծ է պետության և հասարակության բարոյահրավաբանական հարաբերությունների հաշվեկշիռը:

Գլխավոր դատախազը կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վիճակագրական տվյալներ ներկայացրեց ըստ տարիների, ըստ հոդվածների, ըստ համակարգերի և ոլորտների՝ ընդգծելով հատկապես հանցագործություն - բացահայտում հարաբերակցությունը և այդ գործում քաղաքացիական հասարակության դերակատարությունը:

«Վաղուց ժամանակն է, որ հասարակական գիտակցությունը զուգորդվի իրավապահ մարմինների գործառույթներին: Հասարակության ներգրավվածությունը օր առաջ կբերի հանցագործությունների, այդ թվում կոռուպցիոն ռիսկերի մակարդակի նվազեցմանը»,- ասում է գլխավոր դատախազը:

Ծավալված քննարկման ընթացքում հնչած հարցին, թե արդյոք բավարար է հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարը, Ա. Մոսիյանը պատասխանել է. «Ասել, թե բավարար է, նշանակում է ասել, թե այլևս անելիք չկա: Ճիշտ կլինի ասել՝ արդյունավետ է, բայց ոչ բավարար»:

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՐՁԱԿԱԳԻՐ ԿՈՄԻՏԱՍ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ

Ակադեմիկոս Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Միլվա Մինասյանի ղեկավարությամբ հայոց լեզու և գրականություն բաժնի չորրորդ կուրսի ուսանողները կազմակերպել էին գիտական սեմինար՝ նվիրված արձակագիր Կոմիտաս Դանիելյանի ծննդյան 70-ամյակին:

Ս. Մինասյանը կարևորել է ինքնուրույն մոտեցմամբ ոճագիտական վերլուծություն կատարելու ուսանողների փորձը և նշել. «Վաղուց ժամանակն է, որպեսզի մեր ուսանողությանն առաջադրվեն չուսումնասիրված հեղինակներ և ստեղծագործություններ՝ այդպիսով նպաստելով նրանց ինքնուրույն մտքի զարգացմանը»:

Ուսանողները ներկայացրել են արձակագրի կենսագրությունը, ապա՝ նրա մի քանի պատմվածքների ոճագիտական վերլուծությունը, մասնավորապես՝ առանձնացնելով նրա արձակի պատկերավորման և արտահայտչական միջոցները:

Կ. Դանիելյանի մասին հուշեր պատմեց նրա համագյուղացի, դասընկեր, գրականության և լրագրության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.թ. Անահիտ Աթայանը: Նա Կ. Դանիելյանի արձակը բնութագրեց որպես «հոգեբանական, փիլիսոփայական արձակի համադրում, որ սնվում է դասական արձակի ավանդույթներով»:

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ

Մոնթե Մելքոնյանի ծննդյան 60-ամյակին նվիրված միջոցառումները շարունակվում են: ԱրՊՀ պատմության և իրավագիտության, բանասիրական ֆակուլտետների և հայագիտական կենտրոնի համատեղ նախաձեռնությամբ կազմակերպվել էր գիտական նստաշրջան՝ նվիրված ազգային հերոսի ծննդյան 60-ամյակին:

Նստաշրջանին ներկա էին ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը, ԱՀ ԱԺ պատգամավոր Վարդգես Բաղրյանը, պրոռեկտորներ, համալսարանականներ, զինվորականներ, հյուրեր:

Մ. Մինասյանը նստաշրջանի բացման խոսքում ընդգծեց ազգային մեծությունների նվիրված միջոցառումների նշանակությունն ու ողջունեց ֆակուլտետների՝ ազգային հերոսին հերթական անգամ անդրադառնալու նախաձեռնությունը:

«Ես՝ որպես մարտունեցի, շատ լավ գիտեմ, թե ինչպիսի կերպար էր Մարտունին Մոնթեաբերդ դարձրած Մոնթեն: Դժբախտաբար բախտ չի վիճակվել նրա հետ շփումներ ունենալ, սակայն նրա մասին կենցաղային, առտնին խոսակցություններում բացահայտվում է նրա բազմաշերտ կերպարը, որին, հուսով եմ, կանդրադառնաք միջոցառման ընթացքում»,- նշել է ռեկտորը:

Նստաշրջանի ընթացքում մասնակից դասախոսներն ու ուսանողները ներկայացրել են Մ. Մելքոնյանի մանկության և պատանեկության տարիները, նրա գործունեությունը արցախյան ազատագրական մարտերում, կերպարը հայ պոեզիայում և այլն:

Ավոյի՝ արցախյան գործունեության վավերագիր Վ. Բաղրյանը, ով այն տարիներին Արցախի հանրային հեռուստատեսության աշխատակիցներից էր և հարցազրույցներ էր վարում հերոսի հետ՝ հանրայնացնելով նրա գաղափարներն ու պատգամները, Ավոյին ներկայացրեց իբրև բոլորինը և յուրաքանչյուրինը՝ առանձին - առանձին:

Բացի իր և Ավոյի մտերմիկ զրույցներից, Վ. Բաղրյանը անդրադարձավ նաև կադրից դուրս, չլուսաբանված զրույցներին, նրա պատգամներին:

Միջոցառման ընթացքում ռեկտորի հրամանով կրթաթոշակով և գրքերով պարգևատրվել են Շ. Սարգսյանն ու Ա. Ադամյանը, ովքեր բանասիրական ֆակուլտետի կողմից հայտարարված Մ. Մելքոնյանի 60-ամյակին նվիրված շարադրությունների մրցույթում զբաղեցրել են առաջին մրցանակային տեղը:

ԱՐՊՀ-ՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ԱՐԴԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ» ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ԱրՊՀ-ում մեկնարկել է նոր նախագիծ՝ «Արդիական հիմնախնդիրներ» գիտական համագործակցության ծրագիր, որի մեկնարկը տրվել է դեկտեմբերի 7-ին: Պատմության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. Նելլի Բաղդասարյանի նախաձեռնությամբ կյանքի կոչված ծրագրի առաջին քննարկմանը հրավիրվել էին ԱՀ ԱԺ փոխխոսնակ պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Բալայանը և անվտանգության ու ռազմական խնդիրների փորձագետ, ք.գ.թ. Հրաչյա Արզումանյանը:

Հանդիպմանը հրավիրված էին ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը, պրոռեկտորներ, պատմության և իրավագիտության ֆակուլտետի ղեկավարությունը, պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողներ: Ծրագիրը հասարակական հիմունքներով գործող քննարկումների հարթակ է,որի նպատակն է ուշադրության կենտրոնում պահել համահայկական տիրույթում, տարածաշրջանային և համաշխարհային զարգացումներին վերաբերող բազմաբնույթ հարցեր, ըստ այդմ՝ կազմակերպել քննարկումներ՝ բարձրացնելով ուսանողների իրազեկվածության մակարդակն ու ձևավորել քաղաքացիական գիտակցություն: Ելնելով քննարկումներում գիտական և հասարակական լայն շրջանակներին ընդգրկելու նկատառումներից՝ գիտական համագործակցություն ծրագիրը հստակ սահմանագծեր չի դնում առարկայական դիսցիպլինների միջև: Այս մասին ասել է Ն. Բաղդասարյանը՝ հիմնավորելով ծրագրի նպատակն ու գաղափարը: Հանդես գալով «Ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտություն. հնարավոր զարգացումներ, պատերազմի վտանգ» թեմայով դասախոսությամբ՝ Վ. Բալայանը նախ պատմական ակնարկով անդրադարձել է հակամարտությանը, ապա աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում հիմնախնդրի ներկայիս իրավիճակին:

Խոսելով լայնամասշտաբ պատերազմի հավանականությունից՝ բանախոսը կտրականապես բացառում է այն՝ պայմանավորելով մի շարք գործոններով, որոնցից առանձնացնում է հայկական բանակն ու ժողովրդին:

«Մի կողմից մեր պաշտպանության բանակը տարածաշրջանում ամենամարտունակն է և պետք է գիտակցել, որ այն մեր անվտանգության միակ երաշխավորն է, մյուս կողմից՝ ժողովուրդը, ով պատասխանատու է իր և իր ճակատագրի նկատմամբ: Մենք պետք է ոչ պատերազմ, ոչ խաղաղություն իրավիճակում շարունակենք շենացնել մեր երկիրը»,- ասել է Վ. Բալայանը:

Գնահատելով հակամարտության արդի վիճակը և հաշվի առնելով Արցախի և Ադրբեջանի հնարավորությունները՝ Հ. Արզումանյանը «Տարածաշրջանային զարգացումները Հարավային Կովկասում» թեմայով դասախոսությամբ անդրադարձել է ներտարածաշրջանային և անդրտարածաշրջանային գործոնների ազդեցությանը տարածաշրջանային արդի քաղաքական զարգացումներին:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ 200-ԱՄՅԱԿԻՆ

Դեկտեմբերի 13-ին ԱրՊՀ կերպարվեստի ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպված միջոցառումը նվիրված էր Հովհաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյակին:

Ամբիոնի վարիչ, նկարիչ-քանդակագործ Լավրենտ Դալայանը նախ ներկայացրեց ծագումով հայ աշխարհահռչակ ծովանկարչի կենսագրությունն ու ստեղծագործական ուղին:

«Այվազովսկու արվեստը սիրված և ընդունված է ողջ աշխարհում: Նա ստեղծել է ավելի քան 6000 կտավ, որի մի փոքր մասը՝ գեղանկարչական, գրաֆիկական, դեկորատիվ-կիրառական, վավերագիր աշխատանքներ, հնարավորություն ունեցանք տեսնելու Հայաստանի Ազգային պատկերասրահում, զմայլվելու մեծ արվեստագետի հանճարով: Այվազովսկին այն մեծություններից է, ում գործերը ոգեշնչման աղբյուր են եղել և շարունակում են լինել այդպիսին»,- նշել է Լ. Դալայանը:

Նշենք, որ հոկտեմբերի 2-ից 4-ը ԱրՊՀ կերպարվեստի բաժնի մի խումբ ուսանողներ ներկա են գտնվել Հայաստանի Ազգային պատկերասրահում բացված Այվազովսկու 200-ամյակին նվիրված «Հովհաննես Այվազովսկի. Արարում» ցուցահանդեսին:

Ուսանողները ոգևորված էին ցուցահանդեսով և իրենց ելույթներում շնորհակալություն հայտնեցին համալսարանի ղեկավարությանը՝ ընձեռված հնարավորության համար:

«19-րդ դարից սկսած հայկական մշակույթն անհնար է պատկերացնել առանց Այվազովսկու և նրա բարերար ազդեցության: Մենք այն երջանիկներից ենք, որ հնարավորություն ունեցանք ներկա գտնվելու նրա 200-ամյակին նվիրված ցուցահանդեսին, հաղորդակցվելու նրա կախարդիչ արվեստին և երազային պատկերներին»,- իր ելույթում նշել է ուսանողուհի Սյուզաննա Բաղդասարյանը:

ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ

Ոչ ֆորմալ կրթության ծրագրի շրջանակներում դեկտեմբերի 13-ին ԱրՊՀ-ում հյուրընկալվել են արձակագիր, դրամատուրգ, լրագրող Ռուսլան Սաղաբալյանը և Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտի փորձագետ, լրագրող Ռուբեն Մեհրաբյանը:

ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը բացման խոսքում կարևորել է ծրագրի նշանակությունն ու նկատել, որ այն ընդլայնում է ուսանողների մտահորիզոնն ու բազմակողմանի գիտելիքներ հաղորդում տարբեր ոլորտներից:

Հրավիրվածները անդրադարձել են ճշմարիտ լրագրողի գործունեությանը, լրագրողական էթիկային ու բարոյականությանը, գրաքննության և խմբագրության թույլատրելի սահմանին և այլն: Ռ. Սաղաբալյանը լրագրողին համեմատում է սպորտային մեկնաբանի հետ, ով լուսաբանում է ֆուտբոլի առաջնությունը. «Եթե տեղյակ ես՝ ով է խաղում, ով է դարպասապահը, պաշտպանն ու հարձակվողը, գիտես խաղի կանոնները, ապա դժվար չէ մեկնաբանել նրանց քայլերը, դիտարկումներ կատարել»:

Ոլորտում կեսդարյա գործունեություն ծավալած Ռ. Սաղաբալյանը ապագա լրագրողներին հորդորեց լինել պետականամետ, այլ ոչ իշխանամետ, զերծ և վեր լինել ցանկացած տեսակի գաղափարախոսությունից, այդ թվում՝ կուսակցական:

Ռ. Մեհրաբյանը շեշտադրեց հատկապես արցախյան մեդիադաշտի անելիքները՝ նշելով, որ այն պետք է ոչ թե միջնորդ լինի, այլև՝ կարծիք և օրակարգ ձևավորող ու թելադրող: Իսկ այս հարցում պակաս կարևոր չէ նաև լրագրողի դիրքորոշումն ու նրա ներքին բարոյականությունը:

«Ի թիվս այլ հեղափոխությունների, ինչպիսիք են էներգետիկ, արդյունաբերական, տեխնոլոգիական և այլն, նոր թափ է առել տեղեկատվական հեղափոխությունը, որտեղ խոսքը և ինֆորմացիան հանդես են գալիս իբրև նոր զորատեսակ կամ զինատեսակ»,- ասում է լրագրող-վերլուծաբանն ու մեջբերում քաղաքագետ Դավիթ Շահնազարյանի խոսքերը, թե սկիզբ է առել առաջին համաշխարհային հիբրիդային պատերազմը, որը կոնվենցիոնալ պատերազմից տարբերվում է ռազմական տարրերով:

Ներկաները հարցեր են ուղղել բանախոսներին, հետաքրքրվել արցախյան մեդիայի ներկայի և ապագայի նրանց տեսլականով, լրագրողների անելիքներով և այլն: Հարցին, թե որտեղ է բարոյականության սահմանը՝ նրանք մեկնաբանեցին այսպես. «Սահման՝ որպես այդպիսին, լինել չի կարող, այն հարաբերական է: Բարոյականության սահմանն այնտեղ է, որտեղ սկսվում է օբյեկտի անձնական տարածքն ու օրենքը»:

«Առավոտ» օրաթերթի ռուսական սյունակի խմբագիր Ռ. Մեհրաբյանը հանդես է եկել նաև առաջարկությամբ՝ լրագրության բաժնի ուսանողների փորձուսուցումը կազմակերպել թերթի խմբագրությունում, ինչն էլ կուղեղշի հետագա համագործակցությունը:

ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ ԱՐՊՀ-ՈՒՄ ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

ԱրՊՀ ղեկավարության հրավերով դեկտեմբերի 11-ից իրավաբանության բաժնում միջազգային իրավունքի թեմայով երկօրյա դասախոսություններով հանդես է եկել ԱՀ Նախագահի խորհրդական Էմիլ Բաբայանը:

Ներկայացնելով բանախոսին՝ ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը ողջունել է դասախոսություններով հանդես գալու երիտասարդ մասնագետի պատրաստակամությունը՝ կարևորելով նրա՝ արտասահմանում ստացած իրավաբանական կրթությունն ու դասախոսական աշխատանքի փորձը, իսկ ուսանողներին հորդորել լինել ակտիվ և քննարկել հուզող հարցերը:

«Է. Բաբայանն իր պատրաստակամությունն է հայտնել պարբերաբար հանդես գալու միջազգային իրավունքին առնչվող թեմաներով: Համոզված եմ, որ դասախոսությունները կլրացնեն իրավունքի այս ճյուղում ունեցած բացթողումները»,- ասել է ռեկտորը:

Է. Բաբայանը նախ ներկայացրեց դասախոսությունների թեմա՝ տարածքային ամբողջականություն և ազգերի ինքնորոշման իրավունք, մարդու իրավունքներ: Առաջիկա 50-60 տարիների ընթացքում Արցախի Հանրապետության գլխավոր խնդիրը, պաշտպանությունից և տնտեսությունից հետո, միջազգային ճանաչումն է լինելու, ուստի ուսումնառության ընթացքում, բացի տեղական իրավական նորմերից և ակտերից, պետք է լուրջ ուշադրություն դարձվի նաև միջազգային իրավունքին. թեմաների ընտրությունն այսպես է հիմնավորում բանախոսը՝ ուսանողներին կոչ անելով արդյունավետ կիրառել ուսումնառության տարիները՝ մասնագիտական գիտելիքների խորացման առումով. «Անկախությունը, որ հաստատվեց երեք տասնամյակ առաջ խրամատում զենքով, մեր օրերում պիտի վերահաստատեք թուղթ ու գրչով»:

ԿԱՅԱՑԱՎ ԱՐՊՀ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԲԱՑՈՒՄԸ

Դեկտեմբերի 19-ին ԱրՊՀ-ում տեղի է ունեցել հոգեբանական կենտրոնի բացման արարողությունը: Բացմանը ներկա էին ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, ՊԲՀ ԱՀՏԱ գծով տեղակալ Վարդան Բալայանը, համալսարանականներ:

ԿԳՍ նախարար Ն. Աղաբալյանը խրախուսելի է համարում մայր համալսարանի՝ բուհական կրթության նոր մշակույթի ձևավորմանն ուղղված քայլերը նշելով, որ կենտրոնը դրական քայլ է ոչ միայն ուսանողների և դասախոսների պրակտիկ կարողությունների կատարելագործման, այլև քաղաքացիական հասարակությանը հոգեբանական ծառայությունների մատուցման տեսանկյունից:

«Կենտրոնի նպատակներն ու խնդիրները հուսադրում են, որ մասնագետների պատրաստումը կբերի որակական նոր աստիճանի, իսկ որակավորված հոգեբանների կարիք կա գրեթե բոլոր ոլորտներում, առանձնապես դպրոցներում, զինված ուժերում, հասարակության բոլոր շերտերում»,- նշել է նախարարը ընդգծելով, որ հասարակությունը ճիշտ է ընկալում հոգեբանական ծառայության իմաստը:

ՊԲՀ ԱՀՏԱ գծով տեղակալ Վ. Բալայանը ևս կարևորել է կենտրոնի դերն ու նշանակությունը: Նանշել է, որ կենտրոնի ձևավորումից առաջ էլ ՊԲ-ն համագործակցել է հոգեբանության բաժնի դասախոսների և ուսանողների հետ՝ պարբերաբար կազմակերպելով հավաքներ սպա-հոգեբանների համար. «Միանշանակ կարիք կա որակավորված մասնագետների, որոնց օգնությամբ հնարավոր կլինի ուղղորդել ՊԲ հոգեբանական ինստիտուտի աշխատանքները, ինչն էլ կբերի առկա խնդիրների համատեղ լուծման»:

«Այն, ինչի մասին խոսվում էր երկար ժամանակ, այսօր իրականություն է: Հոգեբանական ծառայությունների կենտրոնը ծնունդ է հայկական երկու խոշոր բուհերի ԱրՊՀ-ի և ՀՊՄՀ-ի համագործակցության»,- նշել է ԱրՊՀ պրոռեկտոր Վ. Յարամիշյանը, ապա կարևորել վերջինիս նշանակությունը՝ իբրև

հոգեբան մասնագետների պատրաստման դարբնոց և հասարակության հոգեբանական խնդիրներ ունեցող անդամներին հոգեբանական աջակցության ցուցաբերման կենտրոն:

Կենտրոնի, նրա անհրաժեշտության և հետագա գործունեությանն անդրադարձան ԿԳՍ մասնագիտական կրթության և գիտության բաժնի պետ Լ. Ղարախանյանը, «Ապագա» հոգեբանական ծառայության կենտրոնի տնօրեն Ա. Բեջանյանը: Վերջիններս հավաստիացրին, որ ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի պաշտոնական բացման արարողությանը նախորդած 4-5 ամիսների աշխատանքը հող է նախապատրաստել կենտրոնի արդյունավետ գործունեության համար, և որ կենտրոնը պատրաստ է լիարժեք ծառայություններ մատուցելու: Ասվածը վկայում են ՀՀ առաջատար կենտրոններում մի քանի անգամ վերապատրաստումներ անցած ուսանողներն ու դասախոսները, կահավորված սենյակներն ու ձեռք բերված գործիքակազմը:

Պաշտոնական բացման արարողությունից հետո հրավիրվածները շրջայց կատարեցին կենտրոնում, ծանոթացան պայմաններին:

«ԵՎՐՈՊԱ ԴՈՆՆԱ ԱՐՄԵՆԻԱ» ՊԱՑԻԵՆՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐՊՀ-ՈՒՄ

Դեկտեմբերի 1-ին ԱրՊՀ-ում էր «Եվրոպա Դոննա Արմենիա» կազմակերպության հիմնադիր նախագահ Նվարդ Քոչարյանը, ով ուսանողների հետ հանդիպմանը ներկայացրեց կրծքագեղձի ինքնազննման և կրծքագեղձի քաղցկեղի կանխարգելման տեխնիկան:

Հանդիպման նախաձեռնությունը «Արցախի երիտասարդության զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Սուսաննա Պետրոսյանինն էր:

«Մեր կազմակերպությունը նախաձեռնել է «Առողջ սերունդ» ծրագիրը, որի նպատակն է երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի քարոզումն ու առողջ կենսակերպ վարելու կանոնների ուսուցումը: Այս հանդիպումը նույն ծրագրի հերթական փուլն է»,- ասում է կազմակերպության նախագահը:

Կազմակերպության գործունեության, նախագծերի, կատարած աշխատանքների և առաջիկա պլանների մասին պատմել է Նվարդ Քոչարյանը: Բանախոսը նկատում է, որ մեր երկրում քաղցկեղը հայտնաբերվում է բավական բարդացած վիճակներում և վերջին փուլերում՝ բուժումը դարձնելով ավելի երկարատև ու բարդ: Եվրոպայի փորձն, իհարկե, արդյունավետ է, սակայն՝ ոչ լիովին կիրառելի մեզ մոտ, քանի որ պետք է հաշվի առնել ազգային բազմաթիվ առանձնահատկություններ, որոնք խանգարում են երիտասարդ աղջիկներին բարձրաձայնել կրծքագեղձի խնդիրների մասին:

«Առողջ կրծքագեղձ» նախագծի և «Եվրոպա Դոննա Արմենիա» պացիենտական կազմակերպության համագործակցության նպատակն է Հայաստանում զարգացնել և ընդլայնել կրծքագեղձի քաղցկեղի դեմ պայքարը, ինչպես նաև այս ոլորտում նշանակալից բարեփոխումներ նախաձեռնել»,- ասում է Ն. Քոչարյանը և կոչ անում պարբերաբար բուժզննում անցնել, նույնը քարոզել նաև ընկերների շրջանում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՀ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԵՏ

Դեկտեմբերի 28-ին ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի մի խումբ դասախոսներ և ուսանողներ, ռեկտոր Մ. Մինասյանի գլխավորությամբ, ԱՀ կառավարությունում հանդիպում են ունեցել ԱՀ պետական նախարար Արայիկ Հարությունյանի հետ: Առիթը՝ ԱՀ կառավարության 2007-2017թթ. գործունեության հիմնական արդյունքների քննարկումն էր, որին մասնակցում էին նաև ԱՀ-ում գործող մյուս բուհերի ներկայացուցիչներ:

Հանդիպման ընթացքում ներկաների ուշադրությանն են ներկայացվել վերջին տասը տարիներին Արցախի տնտեսության մեջ արձանագրված հիմնական արդյունքները:

«Ինչպես գիտեք, վերջին տասը տարիներին Արցախի կառավարությանը հաջողվել է ապահովել տարեկան միջինը շուրջ 10 տոկոս տնտեսական աճ: Արդյունքում, շուրջ 70 միլիարդ դրամի անվանական ՀՆԱ-ն տասը տարիների ընթացքում դարձել է մոտ 270 միլիարդ դրամ՝ապահովելով շուրջ 3.8 անգամ աճ: Սա, իհարկե, շատ կարևոր հաջողություն է»,- ասել է Ա. Հարությունյանը:

Այնուհետև ներկաների ուշադրությանն է ներկայացվել 2007-2017թթ.-ին հանրապետության կենսագործունեության տարբեր բնագավառներում գրանցված հիմնական ցուցանիշները: Ա. Հարությունյանը պատասխանել է նաև ԱրՊՀ ուսանողների հնչեցրած հարցերին, խոսել մի շարք ոլորտների ու պետական ծրագրերի մասին՝ միաժամանակ կարևորելով որակյալ կրթության նշանակությունը պետության զարգացման գործում:

ԿԱՅԱՑԱՎ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

ԱրՊՀ գիտական խորհրդի տարեվերջյան նիստում քննարկվեցին կանոնակարգեր, լսվեցին հաշվետվություններ, տպագրության երաշխավորվեցին աշխատություններ:

Ռեկտոր Մանուշ Մինասյանը ներկայացրեց ԱրՊՀ-ում գիտական, մեթոդական և այլ գրականության հրատարակման կարգը, ակադեմիական ազնվության և անազնվության մասին կանոնակարգը հաստատելու մասին հարցերը, որոնք հաստատվեցին միաձայն:

Գիտխորհուրդը երաշխավորեց «ԱրՊՀ գիտական տեղեկագիր» հանդեսի հոդվածներն ու մի շարք ձեռնարկների տպագրությունը, ապա լսեց և ի գիտություն ընդունեց աշխարհագրության, քիմիայի, կենսաբանության ամբիոնների և գիտական գրադարանի նախորդ ուսումնական տարվա կատարած աշխատանքների հաշվետվությունները:

Մ. Մինասյանը շնորհակալություն հայտնեց Գիտական գրադարանի վարիչ Լաուրա Առստամյանին՝ 42-ամյա անբասիր գործունեության ու վաստակի համար և պարգևատրեց հուշամեդալով:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԷԻՆ

Օրերս տնտեսագիտության ֆակուլտետում կազմակերպված միջոցառումը կլոր սեղանի ձևաչափով քննարկում էր, որը նվիրված էր բնապահպանական հիմնախնդիրներին:

Միջոցառմանը ներկա էին ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը, պրոռեկտորներ, տնտեսագիտության ֆակուլտետի դասախոսներ, պետական և մասնավոր հատվածի շահագրգիռ կառույցների ներկայացուցիչներ, ամբիոնների վարիչներ, հյուրեր, ուսանողներ:

Քննարկումը նախաձեռնել էին տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Մանգասարյանը և կառավարում մասնագիտության առաջին կուրսի մագիստրանտները: Կլոր սեղանին նախորդել է բնապահպանական խնդիրների վերաբերյալ սոցհարցման կազմակերպումը, որի արդյունքների հիման վրա ուսանողների կողմից կատարվել է վերլուծություն: Ուսանողների կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ բնակչության մի ստվար զանգված մտահոգ է բնապահպանությամբ և առաջ է քաշում բնապահպանական այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են մթնոլորտի աղտոտվածությունը, կենցաղային թափոնների չվերամշակումը, ջրային ռեսուրսների աղտոտվածությունը, բուսական և կենդանական ռեսուրսների ոչ նպատակային օգտագործումը, ճանապարհային գերբեռնվածությունը մեքենաներով, անտառային տնտեսության ոչ ճիշտ շահագործումը և այլն:Վերոնշյալ թեմաներով ուսանողների զեկուցումներին հաջորդած քննարկումների համար հրավիրվել էին բնական ռեսուրսների, թափոնների, մթնոլորտի արտանետումների կառավարման գործակալության պետ Կարեն Կիրակոսյանը, «Արցախանտառ» ՊՈԱԿ տնօրեն Արթուր Օհանյանը, գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի հողօգտագործման բաժնի պետ Վալերի Ղազարյանը, կենսառեսուրսների, ջրային ռեսուրսների, կառավարման բաժնի պետ Աշոտ Հարությունյանը, թափոնների և մթնոլորտային արտանետումների կառավարման բաժնի պետ Գոհար Գրիգորյանը, բնական ռեսուրսների կառավարման և բնապահպանական քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ Ինգա Գասպարյանը, «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ գլխավոր հաշվապահ Նաիրի Մուրադյանը և Արցախի սանիտարա-համաճարակաբանական կայանի բժշկուհի Հասմիկ Հայրապետյանը, ովքեր ծավալված քննարկումների ընթացքում արտահայտեցին իրենց տեսակետն ու դիրքորոշումը առաջ քաշված հիմնախնդիրների վերաբերյալ, ներկայացրեցին պետական և մասնավոր սեկտորում դրանց վերացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: